

Արման Արսենի Բաբախանյան

Ծնվել է 06.07.1996թ.-ին, Երևան քաղաքում:

2018թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2020թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2020թ.-ից մինչ օրս հանդիսանում է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի Քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ (ատենախոսության թեմա՝ «Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի քրեաիրավական հիմնախնդիրները ՀՀ-ում»):

01.02.2019-20.08.2019թթ. աշխատել է ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայությունում՝ որպես առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

21.08.2019-24.02.2020թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարությունում՝ որպես նախարարի տեղակալի օգնական:

16.03.2020թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ Վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական:

2019թ.-ից առ այսօր հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան (արտոնագրի գործողությունը կասեցված է):

2021թ.-ից առ այսօր հանդիսանում է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի «Քրեական իրավունք» դասընթացի սեմինարավար:

Ամուսնացած չէ:



Հովհաննես Կարենի Սաֆարյան

Ծնվել է 10.03.1994 թվականին, Երևան քաղաքում:

2013թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2015թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2015-2018թթ. առկա ուսուցմամբ սովորել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտուրայում:

2012 թվականի հուլիսից մինչ 2012 թվականի դեկտեմբեր ամիսը աշխատել է «Տիտան» Ա/Կ-ում՝ որպես իրավախորհրդատու:

2014-2015թթ. աշխատել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում՝ որպես գործավար:

13.12.2017-01.07.2021թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազությունում՝ որպես դատախազ:

01.07.2021թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազությունում՝ որպես ավագ դատախազ:

Ունի առաջին դասի խորհրդականի դասային աստիճան:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:



Շիրակ Գագիկի Հարությունյան

Ծնվել է 28.01.1987թ.-ին, Շիրակի մարզի Գյումրի քաղաքում:

2008թ.-ին ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) բակալավրիատը՝ «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

2010թ.-ին ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) մագիստրատուրան՝ «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

2014թ.-ին ավարտել է Երևանի «Հայբուսակ» համալսարանի Գյումրու «Շիրակացի» մասնաճյուղի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2020թ.-ին ավարտել է Երևանի «Հայբուսակ» համալսարանի Գյումրու «Շիրակացի» մասնաճյուղի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

30.06.2007-01.11.2010թթ. աշխատել է ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդի երաժշտական դպրոցում՝ որպես հաշվապահ:

15.11.2010-23.11.2010թթ. աշխատել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի գործավար:

23.11.2010-11.08.2015թթ. աշխատել է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատարանի աշխատակազմի գրասենյակի մասնագետ:

11.08.2015-20.07.2018թթ. աշխատել է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

2018թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Դատական ծառայության երկրորդ դասի խորհրդական է:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:



Լիլիթ Հարությունի Հակոբյան

Ծնվել է 04.09.1996 թվականին, Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքում:

2003-2011թթ. սովորել է Էջմիածին քաղաքի Խ. Աբովյանի անվան թիվ 4 հիմնական դպրոցում:

2014թ.-ին ավարտել է Էջմիածին քաղաքի Մ.Գորկու անվան թիվ 5 ավագ դպրոցը:

2018թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2020թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2017-2018թթ. մասնակցել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայի դասընթացին:

22.08.2018-12.11.2018թթ. աշխատել է Էջմիածնի համայնքապետարանում՝ որպես իրավաբանական բաժնի 2-րդ կարգի մասնագետ:

12.11.2018-08.12.2020թթ. աշխատել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

08.12.2020թ.-ից առ այսօր աշխատում է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած չէ:



Լիանա Արամի Եդիգարյան

Ծնվել է 02.10.1992 թվականին, Երևան քաղաքում:

2009թ.-ին ավարտել է թիվ 49 միջնակարգ դպրոցը:

2013թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2015թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի մագիստրատուրան, 2019 թվականին՝ ասպիրանտուրան:

05.05.2014-03.12.2015թթ. աշխատել է «Դ.Ր.Օ. Երկգիշին» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբանական աշխատանքների ավագ համակարգող:

04.12.2015-03.04.2017թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի միջազգային համագործակցության վարչության Զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցության բաժնում՝ որպես կրտսեր մասնագետ:

03.04.2017-02.05.2017թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի միջազգային համագործակցության վարչության Միջազգային կապերի բաժնում՝ որպես մասնագետ:

02.05.2017-01.02.2019թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես նախագահի խորհրդական:

01.02.2019-01.10.2021թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայությունում՝ որպես պետի ժամանակավոր պաշտոնակատար:

01.10.2021թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

01.10.2016թ.-ից առ այսօր Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դասախոս է:

Ունի դատական ծառայության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան:

Ամուսնացած է:



Էմմա Ղևոնդի Ավագյան

Ծնվել է 29.06.1993 թվականին, Երևան քաղաքում:

1999–2008թթ. սովորել է Կոտայքի մարզի գյուղ Զովունիի Ռ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոցում:

2008–2009թթ. սովորել է Երևանի Գ. Մարգարյանի անվան թիվ 94 միջնակարգ դպրոցում:

2013թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2015թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան, 2019 թվականին՝ ասպիրանտուրան:

2017թ.-ից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան (արտոնագրի գործողությունը կասեցված է):

24.02.2014-24.04.2019թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնում՝ որպես ավագ լաբորանտ:

15.06.2015թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ արդարադատության ակադեմիայում՝ որպես դասախոս:

01.09.2016թ.-ից առ այսօր աշխատում է Երևանի պետական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնում՝ որպես դասախոս:

2017թ.-ից առ այսօր հանդիսանում է քննիչների թեկնածուների քննական հանձնաժողովի անդամ, այնուհետև քննիչների թեկնածուների քննության արդյունքների բողոքարկման հանձնաժողովի անդամ, ինչպես նաև ՀՀ դատախազների քննության արդյունքների բողոքարկման հանձնաժողովի անդամ:

03.03.2015-16.09.2016թթ. աշխատել է ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմի քննչական աշխատանքների կազմակերպման կատարելագործման և քննության մեթոդիկայի մշակման բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

17.03.2017-18.03.2019թթ. աշխատել է ՀՀ Վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական:

16.04.2019-28.02.2020թթ. աշխատել է ՀՀ Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության ներման հարցերով բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

02.03.2020-15.10.2021թթ. աշխատել է ՀՀ հատուկ քննչական ծառայության իրավական ապահովման բաժնում՝ որպես բաժնի պետ:

19.11.2021-03.02.2022թթ. աշխատել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի իրավական ապահովման վարչությունում՝ որպես վարչության պետի պաշտոնակատար:

03.02.2022թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի իրավական ապահովման վարչությունում՝ որպես վարչության պետ:

Ունի դատական ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

Հանդիսանում է ավելի քան 10 գիտական հոդվածի հեղինակ:

Ամուսնացած չէ:



Ռուզաննա Ռադիկի Ամիրջանյան

Ծնվել է 25.03.1977 թվականին, Երևան քաղաքում:

1984–1994թթ. սովորել է Երևան քաղաք թիվ 176 ռուսական դպրոցը:

2006թ.-ին ավարտել է Երևանի «Գալիք» համալսարանի իրավագիտության ֆակուլտետը՝ դիպլոմավորված:

01.06.2006-08.08.2007թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանում՝ որպես արխիվապահ:

08.08.2007-13.06.2011թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի աշխատակազմի գրասենյակում՝ որպես ավագ մասնագետ:

19.04.2011-13.06.2011թթ. գործուղվել է Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչություն՝ դատական վիճակագրության վարման աշխատանքներին օժանդակելու նպատակով:

13.06.2011-05.10.2015թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչությունում՝ որպես մասնագետ:

05.10.2015-01.11.2018թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման և վիճակագրության վարչության Դատական վիճակագրության վարման և ամփոփման բաժնում՝ որպես մասնագետ:

01.11.2018-07.01.2022թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչության մշտադիտարկման և դատական վիճակագրության բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

07.01.2022թ.-ից առ այսօր աշխատում է Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչության դատական պրակտիկայի վերլուծության բաժնում՝ որպես գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

02.04.2014 թվականին Դատական դեպարտամենտի ղեկավարի հրամանով շնորհվել է դատական ծառայության երկրոդ դասի խորհրդականի դասային աստիճան:

Ամուսնացած է, ունի երկու որդի:



Վլադիմիր Յուրիի Շահինյան

Ծնվել է 30.06.1991 թվականին, Լոռու մարզի Վանաձոր քաղաքում:

2008թ.-ին ավարտել է Վանաձորի թիվ 11 միջնակարգ դպրոցը:

2012թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2012-2014թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

2017թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

08.06.2015-08.07.2015թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես ցրիչ:

18.07.2015-26.07.2017թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի գործավար:

26.07.2017-08.01.2018թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական:

08.01.2018-08.11.2018թթ. աշխատել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական:

08.11.2018թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

06.12.2021թ.-ից առ այսօր հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան (արտոնագրի գործողությունը կասեցված է):

Ամուսնացած է, ունի մեկ դուստր:



Բարսեղ Արագածի Մուրադյան

Ծնվել է 24.04.1986 թվականին, Լոռու մարզի Վանաձոր քաղաքում:

2003թ.-ին ավարտել է Վանաձորի թիվ 29 միջնակարգ դպրոցը:

2007թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2007-2009 թվականներին ծառայել է ՀՀ զինված ուժերում:

06.04.2010-21.06.2013թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնում՝ որպես քննիչ:

21.06.2013-19.09.2014թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի Վանաձոր քաղաքի Բազումի քննչական բաժանմունքում՝ որպես քննիչ:

19.09.2014-01.12.2014թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում՝ որպես քննիչ:

01.12.2014-04.11.2016թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում՝ որպես ավագ քննիչ:

04.11.2016-13.03.2020թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում՝ որպես ՀԿԳ քննիչ:

13.03.2020-03.07.2020թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում՝ որպես ՀԿԳ ավագ քննիչ:

03.07.2020թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ դատախազությունում՝ որպես Լոռու մարզի դատախազության դատախազ:

Ունի արդարադատության երկրորդ դասի խորհրդականի աստիճան:

Ամուրի է, ունի մեկ զավակ:



Արտավազդ Նորայրի Կարապետյան

Ծնվել է 27.10.1994 թվականին, Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում:

2012 թվականին ավարտել է Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցը:

2012-2014թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

2018թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2020թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

12.06.2018 թվականից առ այսօր աշխատում է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր:



Մերի Հովիկի Ալավերդյան

Ծնվել է 15.04.1977 թվականին, Տավուշի մարզի Իջևան քաղաքում:

1997թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2008թ.-ին ավարտել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

01.11.1998-01.11.2000թթ. աշխատել է «Հայփոստ» ՊՓԲԸ «Տավուշի փոստատուն դուստր» ՓԲԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

01.11.2000-25.01.2008թթ. աշխատել է Իջևանի պետական քոլեջում՝ որպես հաստիքային դասախոս:

29.01.2008-04.08.2008թթ. աշխատել է ՀՀ հյուսիսային քրեական դատարանի աշխատակագմի գրասենյակում՝ որպես ավագ մասնագետ:

04.08.2008թթ.-28.02.2009թթ. աշխատել է ՀՀ հյուսիսային քրեական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

24.03.2009-16.04.2001թթ. աշխատել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական:

16.04.2010-11.09.2012թթ. աշխատել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես գրասենյակի պետ:

31.08.2012-28.12.2013թթ. աշխատել է «Շահբազյան և գործընկերներ» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

03.03.2014թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես հանրային պաշտպան:

02.04.2012թ.-ից առ այսօր հանդիսանում է փաստաբանների պալատի անդամ՝ փաստաբան:



Հայկազ Մուշեղի Գալստյան

Ծնվել է 28.02.1985 թվականին, Վայոց ձորի մարզի Վայք քաղաքում:

2002թ.-ին ավարտել է Արմավիրի մարզի, Նորակերտ համայնքի միջնակարգ դպրոցը:

2010թ.-ին ավարտել է Երևանի Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետը՝ դիպլոմավորված:

01.08.2011-01.08.2012թթ. աշխատել է Ա/Ձ Անի Թորոսյան փաստաբանական գրասենյակում՝ որպես իրավախորհրդատու:

01.02.2013-21.01.2015թթ. աշխատել է «Լեգալ Իմպերիա» ՍՊԸ փաստաբանական գրասենյակում՝ որպես իրավաբան:

06.10.2013թ.-ից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ:

22.01.2015թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես հանրային պաշտպան:



Արթուր Արմենակի Ոսկանյան

Ծնվել է 20.09.1984թ.-ին Արմավիրի մարզի Արմավիր քաղաքում:

2005-2007 թվականներին ծառայել է ՀՀ զինված ուժերում:

2007թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2012թ.-ին ավարտել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրան:

17.12.2007-03.04.2013թթ. աշխատել է Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական:

03.04.2013-27.11.2014թթ. աշխատել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես աշխատակազմի ղեկավար:

27.11.2014-04.03.2016թթ. աշխատել է ՀՀ դատախազության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնում՝ որպես բաժնի պետ:

23.01.2017-10.07.2018թթ. աշխատել է ՀՀ դատախազության թիվ 3 /Մարտակերտ/ կայազորի զինվորական դատախազությունում՝ որպես դատախազ:

10.07.2018թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի դատախազ:

ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով ընդգրկված է եղել դատախազների ընդունելիության և ատեստավորման հանձնաժողովում՝ որպես նիստերի քարտուղար, ինչպես նաև ՀՀ դատախազությունում պետական ծառայողների ընդունելիության և ատեստավորման, ՀՀ դատախազությունից կենսաթոշակների նշանակման հանձնաժողովներում՝ որպես հանձնաժողովի անդամ:

Ունի արդարադատության առաջին դասի խորհրդականի աստիճան:

Ամուսնացած է, ունի երկու դուստր:



Հրաչ Հայկի Դաջունց

Ծնվել է 29.09.1990 թվականին, Սյունիքի մարզի Վերիշեն գյուղում:

2007թ.-ին ավարտել է Սյունիքի մարզի Վերիշենի միջնակարգ դպրոցը:

2011թ.-ին ավարտել է Գորիսի պետական համալսարանի իրավագիտության բաժնի բակալավրիատում՝ ստանալով մանկավարժության բակալավրի աստիճան՝ իրավագիտություն մասնագիտությամբ:

2013թ.-ին ավարտել է Գորիսի պետական համալսարանի իրավագիտության բաժնի մագիստրատուրայում՝ ստանալով մանկավարժության մագիստրոսի աստիճան՝ իրավագիտություն մասնագիտությամբ:

2015թ.-ին ավարտել է «Սյունիք» ինստիտուտի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը՝ ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան:

01.03.2012-11.02.2016թթ. աշխատել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական:

08.01.2014-08.01.2016թթ. աշխատել է Գորիսի պետական համալսարանին կից «Սյունիքի» հայագիտական հետազոտությունների կենտրոնում՝ որպես գիտաշխատող:

11.02.2016-25.01.2018թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

25.01.2018թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:



Տիգրան Սոկրատի Քոթանջյան

Ծնվել է 25.05.1985 թվականին, Վանաձորի մարզի Կիրովական քաղաքում:

2002 թվականին ավարտել է Վանաձորի Ստեփան Շահումյանի անվան թիվ 6 միջնակարգ դպրոցը:

2006 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2006-2008 թվականներին ծառայել է ՀՀ զինված ուժերում: Ծառայության ընթացքում պարգևատրվել է «Քաջարի մարտիկ» և «Բանակի գերազանցիկ» կրծքանշաններով, ստացել ավագ սերժանտի զինվորական կոչում:

11.01.2010-01.10.2010թթ. աշխատել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

01.12.2010-11.01.2013թթ. աշխատել է «Բարի Սամարացի» ՍՊ ընկերությունում՝ որպես իրավաբան:

11.01.2013-02.06.2022թթ. աշխատել է Լոռու մարզի դատախազության դատախազ:

ՀՀ գլխավոր դատախազի 2017 թվականի հունիսի 30-ի թիվ 164-Ա հրամանով պարգևատրվել է «Իրավակարգի ամրապնդման համար» մեդալով:

ՀՀ գլխավոր դատախազի 2018 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 416-Ա հրամանով պարգևատրվել է «ՀՀ դատախազության 100-ամյակ» հոբելյանական մեդալով:

2020 թվականի փետրվարի 25-ին շնորհվել է արդարադատության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան:

ՀՀ գլխավոր դատախազի 2021 թվականի հունիսի 25-ի թիվ 202-Ա հրամանով պարգևատրվել է «ՀՀ դատախազություն» կրծքանշանով և «Շնորհակալագրով»:

02.06.2022թ.-ից առ այսօր աշխատում է Լոռու մարզի դատախազության ավագ դատախազ:

Ունի դատական ծառայության առաջին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր:



Արմեն Նիկոլայի Նաղդալյան

Ծնվել է 04.05.1980 թվականին, Երևան քաղաքում:

1997թ.-ին ավարտել է Երևան քաղաքի Դերենիկ Դեմիրճյանի անվան թիվ 27 միջնակարգ դպրոցը:

2001թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2003թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

28.06.2003թ.-ին զորակոչվել է պարտադիր ժամկետային զինծառայության և զինծառայության նշանակվել ՀՀ ՊՆ թիվ 96583 զորամասում:

02.09.2003-05.08.2010թթ. պայմանագրային հիմունքներով ծառայել է ՀՀ ԶՈւ համակարգում. 2003 թվականի սեպտեմբերի 02-ից մինչև 2004 թվականի մարտի 25-ը որպես ՀՀ ՊՆ թիվ 20440 զորամասի դասակի հրամանատար, 2004 թվականի մարտի 25-ից մինչև 2007 թվականի սեպտեմբերի 24-ը որպես ՀՀ ՊՆ թիվ 10724 զորամասի (ռազմական ոստիկանության վարչություն) հետաքննչական խմբի հետաքննիչ, 2007 թվականի սեպտեմբերի 24-ից մինչև 2010 թվականի օգոստոսի 05-ը որպես ՀՀ ՊՆ թիվ 10724 զորամասի (ռազմական ոստիկանության վարչություն) հետաքննչական բաժնի ավագ հետաքննիչ:

Զինվորական կոչումը՝ կապիտան:

10.08.2010-11.01.2013թթ. աշխատել է Լոռու մարզի դատախազության դատախազ:

11.01.2013-16.01.2014թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ:

16.01.2014-17.08.2017թթ. աշխատել է Արագածոտնի մարզի դատախազության ավագ դատախազ:

17.08.2017թ.-ից առ այսօր աշխատում է Արագածոտնի մարզի դատախազի տեղակալ:

Ունի արդարադատության առաջին դասի խորհրդականի դասային աստիճանը:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:



Վիրաբ Ալբերտի Վարդանյան

Ծնվել է 16.07.1995 թվականին, Երևան քաղաքում:

2001-2010թթ. գերազանցությամբ սովորել է Ա.Ս.Պուշկինի անվան թիվ 8 միջնակարգ դպրոցում:

2010-2011թթ. սովորել է ՌԴ, քաղաք Եկատերինբուրգի թիվ 152 միջնակարգ դպրոցում:

2015թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2017թ.-ին գերազանցությամբ ավարտել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2017թ.-ին «Լավագույն մագիստրոս» հանրապետական մրցույթում հասարակագիտական գիտությունների բնագավառում ճանաչվել է հաղթող, ինչի կապակցությամբ պարգևատրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից:

2018թ.-ին գերազանցությամբ ավարտել է ՀԱԱՀ-ի ֆինանսների կառավարում բաժինը:

2016-2017թթ. հանդիսացել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի խորհրդի անդամ:

2017թ.-ին ընդունվել է ասպիրանտուրա՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Իրավագիտության ամբիոնում՝ հանրային իրավունք մասնագիտությամբ:

21.02.2017-25.12.2017թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի իրավական վերլուծության վարչության Իրավական վերլուծության և դատական հանձնարարությունների բաժնում՝ որպես գործավար:

25.12.2017-01.11.2018թթ. աշխատել է ՀՀ արդարադատության խորհրդի աշխատակազմում՝ որպես կրտսեր մասնագետ:

01.11.2018-23.06.2021թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի դատավորների ընդհանուր ժողովի և դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովման վարչության Դատավորների ընդհանուր ժողովի և հանձնաժողովների գործունեության ապահովման բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

23.06.2021-04.03.2022թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի դատավորների ընդհանուր ժողովի և դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովման վարչության Դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովմանն օժանդակող բաժնում՝ որպես գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար, այնուհետև՝ նույն բաժնի պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող:

04.03.2022թ.-ի մարտ ամսից առ այսօր աշխատում է Դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչության Դատական պրակտիկայի վերլուծության բաժնում՝ որպես գլխավոր մասնագետի պաշտոնակատար:

Հանդիսանում է իրավաբանական գիտությունների թեկնածու:

Ունի հրապարակված ավելի քան մեկ տասնյակ գիտական հոդվածներ և մեկ մենագրություն:

Ամուսնացած չէ:



Բունիաթ Ավետիքի Եղիազարյան

Ծնվել է 21.05.1986 թվականին, Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղում:

2002թ.-ին ավարտել է Վաղաշեն գյուղի միջնակարգ դպրոցը:

2007թ.-ին ավարտել է ՀՀ ոստիկանության ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետը՝ դիպլոմավորված:

01.06.2007-30.10.2009թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնում՝ որպես քննիչ:

30.10.2009-02.04.2011թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնում՝ որպես ավագ քննիչ:

02.04.2011-19.12.2012թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնում՝ որպես ՀԿԳ ավագ քննիչ:

19.12.2012-02.10.2014թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնի 2-րդ բաժանմունքի պետ:

02.10.2014-20.11.2017թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի պետի տեղակալ:

09.04.2020-14.05.2020թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ:

14.05.2020-05.06.2020թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի ՀԿԳ ավագ քննիչ:

29.01.2020թ.-ից առ այսօր հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ:

12.06.2020թ.-ից առ այսօր զբաղվում է փաստաբանական գործունեությամբ :

20.07.2020թ.-ից առ այսօր աշխատում է «Յուստինա» ՍՊԸ իրավաբանական գրասենյակում՝ որպես ավագ իրավաբան-փաստաբան:

Ունի արդարադատության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան:

Ամուսնացած է, ունի երեք որդի:



Դավիթ Ռազմիկի Դաբաղյան

Ծնվել է 22.01.1987 թվականին, Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում:

2004թվականին ավարտել է Գավառի Հովհաննես Թումանյանի անվան թիվ 4-րդ միջնակարգ դպրոցը:

2009թ.-ին ավարտել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2009-2011թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

2017թ.-ին ավարտել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրան:

2016թ-ի հունիս ամսից մինչև սեպտեմբեր անցել է եռամսյա դասընթաց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության «Ֆուջոուի» համալսարանում “2016 Training Course on Youth Business Initiation Specialized in International Trade for Armenia” թեմայով:

2021թ.-ի հունվարից մինչև նույն տարվա հունիսը սովորել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության «Գիտաուսումնական կենտրոնում»:

2012-2013թթ. վերապատրաստվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային հետաքննության վարչությունում:

09.07.2014-04.04.2016թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության քաղաքացիական և վարչական գործերով պետական շահերի պաշտպանության բաժնում՝ որպես 1-ին կարգի մասնագետ:

04.04.2016-17.05.2016թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության իրավական խորհրդատվության և զարգացման բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

17.05.2016-30.06.2016թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետական շահերի պաշտպանության բաժնում՝ որպես իրավախորհրդատու:

10.06.2016-09.06.2017թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետական շահերի պաշտպանության բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

09.06.2017-12.08.2019թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության վարչական գործերով պետական շահերի պաշտպանության բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

26.10.2019թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ ազգային անվտանգության ծառայության և կոռուպցիայի հակազդման դեպարտամենտում:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր:



Վահե Ռաֆաելի Սարգսյան

Ծնվել է 09.01.1987թ.-ին, Լոռու մարզի Թումանյան քաղաքում:

2008թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2008-2010 թվականներին ծառայել է ՀՀ զինված ուժերում:

2012թ.-ին ավարտել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրան:

16.05.2012-07.10.2014թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնում՝ որպես քննիչ:

07.10.2014-25.12.2014թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում՝ որպես քննիչ:

25.12.2014-26.10.2018թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում՝ որպես ավագ քննիչ, այնուհետև՝ ՀԿԳ քննիչ:

29.10.2018-29.06.2020թթ. աշխատել է Երևանի կայազորի զինվորական դատախազությունում՝ որպես դատախազ:

29.06.2020-29.09.2021թթ. աշխատել է Երևանի կայազորի զինվորական դատախազությունում՝ որպես ավագ դատախազ:

29.09.2021թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության, զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժնում՝ որպես ավագ դատախազ:

Ամուսնացած չէ:



Վազգեն Արթուրի Սմբատյան

Ծնվել է 01.01.1985 թվականին, Վայոց Ձորի մարզի Գետափ գյուղում:

2001թ.-ին ավարտել է Գետափի միջնակարգ դպրոցը:

2006թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի բակալավրիատը:

2006-2008թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

2012թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2018թ.-ին ավարտել է Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2018թ.-ին հանդիսացել է ՀՀ արդարադատության ակադեմիայի ունկնդիր՝ որպես դատախազի թեկնածու:

22.04.2009-05.12.2012թթ. աշխատել է Երևանի քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲ ընկերությունում՝ որպես գլխավոր մասնագետ:

05.12.2012-02.10.2014թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչությունում՝ որպես կրտսեր մասնագետ:

02.10.2014-05.10.2015թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչությունում՝ որպես մասնագետ:

05.10.2015-12.06.2018թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման և վիճակագրության վարչության Դատական պրակտիկայի ամփոփման բաժին՝ որպես մասնագետ:

17.12.2018-28.03.2019թթ. աշխատել է Արարատի մարզի դատախազության դատախազ:

28.03.2019թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ:

Ամուսնացած չէ:



Շուշան Գեղամի Վանոյան

Ծնվել է 28.05.1989թվականին, Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքում:

2000 թվականին ավարտել է Էջմիածին քաղաքի Ներսիսյան վարժարանը:

2006 թվականին ավարտել է Էջմիածին քաղաքի Անդրանիկ Օզանյանի անվան թիվ 12 միջնակարգ դպրոցը՝ գերազանցությամբ:

2010 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի բակալավրիատը՝ ֆիզիկա /մանկավարժություն/ մասնագիտությամբ:

2013 թվականին ավարտել է Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2020 թվականին ավարտել է «Մարտիգ» Արտաքին տնտեսական կապերի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

23.08.2010-26.05.2015թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավար:

26.05.2015-25.01.2018թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

25.01.2018թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ունի դատական ծառայության առաջին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

Ամուսնացած չէ:



Վազգեն Տիգրանի Սահակյան

Ծնվել է 20.04.1989 թվականին, Երևան քաղաքում:

2005թ.-ին ավարտել է Երևանի Ղազարոս Աղայանի անվան թիվ 63 միջնակարգ դպրոցը:

2011թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2014թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2007-2009թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

Մասնակցել է Արցախի Հանրապետության դեմ 2020 թվականին սանձազերծված պատերազմի ժամանակ հայտարարված զորահավաքային զորակոչին:

23.12.2011-20.01.2014թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժնում՝ որպես քննիչ:

20.01.2014-26.03.2014թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժնում՝ որպես ավագ քննիչ:

26.03.2014-23.09.2014թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության 2-րդ վարչության մարդկանց առևտրի (թրաֆիկինգի), թմրամիջոցների ապօրինի շրջանառության և կազմակերպված հանցագործությունների քննության բաժնում՝ որպես ավագ քննիչ:

23.09.2014-05.05.2018թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ քննիչ:

05.05.2018-26.10.2018թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիբեռհանցագործությունների քննության վարչության ՀԿԳ քննիչ:

26.10.2018-23.09.2019թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիբեռհանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ:

23.09.2019-20.11.2019թթ. աշխատել է ՀՀ քննչական ՀԿԳ քննության գլխավոր վարչության կիբեռհանցագործությունների և բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ:

20.11.2019-17.11.2021թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կիբեռհանցագործությունների և բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչությունում՝ որպես պետի տեղակալ:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:



Էդգար Աշոտի Թովմասյան

Ծնվել է 02.01.1989 թվականին, Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքում:

2006թ.-ին ավարտել է Եղեգնաձոր քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

2007-2009թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

2012թ.-ին ավարտել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2015թ.-ին ավարտել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

25.11.2017թ.-ից առ այսօր հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

01.02.2013-14.10.2014թթ. աշխատել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

14.10.2014-08.01.2018թթ. աշխատել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

08.01.2018թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես հանրային պաշտպան:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:



Անուշ Հայկազի Մխիթարյան

Ծնվել է 27.08.1973 թվականին, Կոտայքի մարզի Աղավնաձոր գյուղում:

1990թ.-ին ավարտել է Կոտայքի մարզի Աղավնաձոր գյուղի միջնակարգ դպրոցը:

1995թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը՝ դիպլոմավորված:

01.08.1989-01.04.1991թթ. աշխատել է «Շողեր» կոոպերատիվում որպես բանվորուհի:

16.04.1996-03.09.1996թթ. աշխատել է «Հրազդանշին» ՓԲԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

03.09.1996թ.-ին որպես ՀՀ Փաստաբանների կոլեգիայի անդամ աշխատել է Հրազդանի իրավաբանական կոնսուլտացիայում, ապա որպես անհատ ձեռներեց փաստաբան շարունակել է փաստաբանական գործունեությունը:

14.03.1997թ.-ից առ այսօր հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

1998-2003թթ. համատեղության կարգով աշխատել է Հրազդանի հումանիտար ինստիտուտում՝ որպես դասախոս, ինչպես նաև ղեկավարել է ինստիտուտի իրավաբանական կլինիկան:

01.01.2006թ.-ից աշխատում է ՀՀ Փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես հանրային պաշտպան:

07.10.2020 թվականին հիմնել է «Մխիթարյան քոնսալթինգ» ՍՊԸ-ն և մինչ օրս աշխատում է որպես տնօրեն՝ իրականացնելով փաստաբանական գործունեություն:

11.01.1999-22.01.1999թթ. մասնակցել է ԱՄՆ, Օկլահոմա քաղաքում AED, USAID, ABA կողմից տեխնիկական համագործակցության շրջանակներում կազմակերպված քրեական իրավունքի պաշտպանների հմտությունների կատարելագործման ծրագրին :

2002թ.-ին մասնակցել է OSCE, ODHIR և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից կազմակերպված «Մարդու իրավունքերի հարցերով մոնիտորինգ և հաշվետվություններ» թեմայով սեմինարներին:

2003թ.-ին Տալին քաղաքում մասնակցել է OSCE, ODHIR «Երիտասարդ կին քաղաքական լիդերների մասնակցությունը քաղաքական կյանքին» թեմայով սեմինարին:

2003թ.-ին մասնակցել է INTERIGHS, BARA, NHC, OSJI-ի կողմից կազակերպված ՄԻԵԿ-ով նախատեսված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման հիմքով գանգատներ պատրաստող և ԵԴ ներկայացնող ՀՀ փաստաբանների համար վերապատրաստման ծրագրին:

2020-2021թթ. մասնակցել է Պրահա քաղաքում CEELI INSTITUTE-ի կողմից կազմակերպած «Գործնական աշխատանքներ մինչ ՄԻԵԴ դիմելը» թեմայով սեմինարին:

Ամուսնացած չէ: